

արբէր այն ջերմ համակրանքը, որ բուլղար ժողովուրդն ու մտաւորականութիւնը միշտ տածեր են մեզի հանդէպ, մանաւանդ վերջին 30 տարուան մեր ազէտալի փորձութիւններու ընթացքին) :

Տարարախտարար, օտար աղբիւրներու մէջ չեմ գտներ քիչ-չատ ամփոփ տեսութիւն մը բուլղարներու յեղափոխական շարժումներու մասին: Կոիւներ շատ չեն ունեցած արդէն եւ ապտամբութեան առաջին թոյլ փորձերը խեղդուեր են արիւնի մէջ: Ջարդերն սկսուեր էին չէրքէզներու ձեռքով 1875 թ. նոյեմբերին: Կոտորեցին նախ Սուլթի զէւղը: Քանի մը ամիս յետոյ, բուլղարները փորձեցին այդ կոտորածի վրէժը հանել, ապտամբելով Սորէ-լիցայում: Այն ժամանակ սկսուեցաւ մեծ, զանգուածային ջարդը: Սուլթանը հրամայեց նետել ապստամբ Բուլղարիոյ վրայ տաս հազար բաշիրօղուկներ: Միմիայն Բատակ փոքրիկ քաղաքում 7000 քնակիչներէն 6000-ը խող-խողուեցան ամենանուրբ բարբարոսութիւններով: Մէկ քանի օրուան մէջ 79 զիւղ հրդեհի ճարակ եղան, անուազը 15,000 հոգի սպանուած եւ 80,000 անտուն, թափառական մնացած:

* * *

Ուշ հասաւ բուլղարական սարսափներու արձագանքը Եւրոպա: Բայց արդէն Սելանիկի հիւպատոսներու սպանութիւնը բաւ էր, որ պետութիւնները շարժուէին: Տեղի ունեցաւ խորհրդաժողով Բերլինի մէջ, ուր ներկայ էր ինքը ցարը, Ալեքսանդր Բ.: Սմբազրեցին նոր յուշագիր մը, ներշնչուած գլխաւորապէս Գօրչակովէն: Ռուսաստան, Գերմանիա, Աւստրիա կը թելադրէին սուլթանին՝ իրագործել բալկանեան ապտամբներու պահանջները եւ կը սպառնային հակառակ դէպքում դիմել խիստ միջոցներու...:

Սակայն եւրոպական «համերգը» անկատար էր, աններգաշնակ: Ֆրանսա, Իտալիա «սկզբունքով» միայն իրենց կողմնակցութիւնը յայտնեցին այդ յուշագրին, իսկ Անգլիա բացէ ի բաց մերժեց: Եւ վերստին Դիլրայթլի անպատիւ դահլիճը քաջալերեց թիւրք մարդասպան կառավարութիւնը...:

Այդ միջոցներուն սուլթան Աբդուլ Ազիզ

սպանուեցաւ: Հրապարակ եկաւ, Մուրադ Ե. ի հետ, այսպէս կոչուած «սահմանադրական կուսակցութիւնը» Միթհազ փաշայի ղեկավարութեամբ: «Երիտասարդ թիւրքիան» էր...:

Միթհազ փաշա — թիւրքիոյ մեծագոյն մարդիկներէն մէկը... պատմագիրները շատ ալ համերաշխ չեն, անոր էութիւնը որոշելու մէջ: Ոմանց համար, ան ճշմարիտ ազատական մըն էր, արեւմտեան քաղաքակրթութեան սիրահար եւ կ'ուզէր նետել թիւրքիան նոյն արեւմտեան կուլտուրայի աւազանը: Ուրիշները կը դիտեն զայն, որպէս մոլեռանդ թիւրք ազգայնական մը, որ կ'ատէր Եւրոպան ու իր պարլամենտները եւ ազատականութեան հովեր կ'առնէր՝ միայն թիւրքիոյ ամբողջութիւնը փրկելու համար՝ քրիստոնեայ ազգերու անջատական շարժումներէն եւ քրիստոնեայ պետութեանց միջամտութիւններէն:

Դժուար է չհամաձայնել այդ կարծիքի հետ: Մեր դրականութեան մէջ եւս առհասարակ պատկառանքով խօսուած է այդ մարդու մասին. վասնզի Գրիգոր Օտեան անոր մտերիմ խորհրդականն էր: Թալէաթ փաշան ալ իր «մտերիմներն» ունէր հայոց մէջ — Վարդգէս, Ակնունի...:

Երանի՛ չլինէին այդ Օտեանները, որոնք, լեցուած կոյր ատելութեամբ դէպի Ռուսաստանը, տարուեցան Միթհազներու խաբէպատիր խոստումներէն եւ նեղ Ալբիոնի զիրկը նետուեցան, քաշելով իրենց հետ Պատրիարք ու Ազգային ժողով... Այդ չէր, հարկաւ, որ կործանեց հայկական դատը, բայց, անտարակոյս, այդ անգլիամոլ եւ թիւրքամոլ հայ դործիչները հակառուսական իրենց անմիտ ցոյցերով պակաս չլինասեցին դործին՝ այդ ճակատադրական վայրկեաններուն: (Յիշենք միայն Վարժապետեանի ճառը Ռուսաստանի դէմ):

Միթհազ փաշա յօրինեց թիւրք պարլամենտն ու սահմանադրութիւնը՝ յաակապէս արտաքին վտանգը չեղորացնելու նպատակով, ինչպէս որ 1908-ին անոր հարազատ ժառանգորդները — Թալէաթներ ու Էնվէրներ — յօրինեցին «օսմանեան յեղափոխութիւնը»՝ թիւրք հայրենիքի նոր յօշոտման ծրագիրը խափանելու համար, — ծրագիր մը, որ նոր ընդունուած էր Ռէվելի պատմական տեսակցու-